Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Նորաշենի Փ.Կ.Ավագյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմություն/ 5 դասաժամ /, հասարակագիտություն / 7 դասաժամ / և մաթեմատիկա / 20 դասաժամ / առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբախշման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև1),
2. մեկ լուսանկար 3x4 չափի,
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
4. անձը հաստատող փաստաթուղթ,
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
6. ինքնակենսագրություն (Ձեվ 5),
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9. հրատարակած հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
10 որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 25-ից **մինչև սեպտեմբերի 07-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 13-ին՝** ժամը 15:00-ին, Տավուշի մարզի Նորաշենի Փ.Կ. Ավագյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Նորաշեն, 4 փ շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077121777, 077716535 հեռախոսահամարով: